Արձանագրություն N 2

«ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ 18/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

Հեմոդիալզի նյութեր և պարագաներ

ք. Կապան «26» հունվար 2018թ.

ժամը 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝ Վիրաբ Մինասյան

հանձնաժողովի անդամներ՝ Ռիտա Մկրտչյան

Ալինա Առաքելյան

Պավել Հախվերդյան

Լարիսա Հովհաննիսյան

հանձնաժողովի քարտուղար՝ Սահականուշ Գրիգորյան

Ի. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Վ. Մինասյան)

1. 1. **Ընդունել ի գիտություն, որ.**

սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտ է ներկայացրել մեկ կազմակերպություն.

հ/հ	Կազմակերպության անվանումը	Հասցեն
1	«Ֆրեզեն»ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի պող. թիվ 6 բնակելի տուն էլ. փոստ՝ frezen1@mail.ru

1.2. **Հայտ պարունակող ծրարների կազմման և ներկայացման համապատասխանությունն հրավերով սահմանված կարգին.**

Մասնակց կողմից ներկայացրած ծրարը համապատասխանում 1 հրավերով նախատեսված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

1.3. **Բացված ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին**

Բոլոր փաստաթղթերը առկա են:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

1. 4. **Հայտ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկը.**

հ/հ	անվանումը և ապրանքային նշանը	չափման միավորը	ընդհանուր քանակը	Ընդհանուր գինը առանց ԱԱՀ
1	Երկլուսանցքանի կաթետր	հատ	5	222925
2	Ֆիստուլային ասեղ G 16 զ/ե	Հատ	1550	657200
3	Ֆիստուլային ասեղ G 17 զ/ե	հատ	650	275600
4	Ֆիստուլային ասեղ G 17 երակային	հատ	650	275600
5	Ֆիստուլային ասեղ G 16 երակային	հատ	1550	657200
6	Արյան հոսքային գծեր `արյունատար մագիստրալներ	հատ	2160	8395920
7	Դիալիզորդ, ցածր թափանցելիությամբ /հեմոդիալիզատոր/ F 7 HPS	հատ	108	716040
8	Դիալիզորդ, ցածր թափանցելիությամբ /հեմոդիալիզատոր/ F 8 HPS	հատ	1104	7728000
9	Դիալիզորդ, ցածր թափանցելիությամբ /հեմոդիալիզատոր/ F 6 HPS	հատ	936	5616000

10	Պուրիստերիլ 1*5	հատ	15	347775
11	Ցիտոստերիլ 1*5	հատ	30	507900
12	Խտանյութ AF -15 /1*4/	արկղ	84	3249540
13	Խտանյութ BI -84 /1*4/	արկղ	24	976200

1. 5. **Հայտերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին.**

Հարցադրում N 1. Մեր կարծիքով ակնհայտ է, որ Ձեր Գնանշման հարցման մեջ նախատեսված է դիալիզի հետ կապված ապրանքների ձեռքբերումը: Դիլիզի սարքավորումների վերանորոգումը կամ սպասարկումը հանդիսանում է ծառայության մատուցում և պետք է լինի առանձին/ Ծառայության Մատուցման/ գնանշման հարցման առարկա և չի կարելի ծառայության և ապրանքների մատակարարման հարցումները միավորել մեկ գնանշման մեջ: Մենք գտնում ենք, որ ցանկացած դիալիզատոր, որը կարող է օգտագործվել Ձեր մոտ ունեցած 4008S սարքավորումների հետ , դուք իրավունք չունեք անտեսելու այն պատճառով, որ տվյալ մատակարարը չունի Ձեր սարքավորումների վերանորոգման և սպասարկման իրականացնելու հավաստագիր: Վաճառողը պարտավոր չէ ապահովելել սարքավորումների հետ աշխատանքները Ձեր կողմից նշված որպես պարտադիր պայման:

Քանի որ Fresenius Medical Care ընկերությունը ունի Հայաստանում ներկայացուցիչ, և անհեթեթություն կլինի իրենց կողմից որևէ այլ կազմակերպությանը տրամադրել վերը նշված հավաստագիրը, ուստի Ձեր կողմից ներկայացված պարտադիր պայմանը/*Պարտադիր պայման՝ Մատակարարը պետք է ունենա Fresenius Medical Care ընկերության կողմից տրամադրված 4008S սարքերը վերանորոգելու հավաստագիր; գործող սարքերի ամենամսյա ստուգում; անհրաժեշտության դեպքում սարքերի ոչ պլանային ստուգում և վերանորոգում; անհրաժեշտության դեպքում սարքավորումները սպասարկող անձնակազմի վերապատրաստում/ սահմանափակում է ցանկացած այլ մատակարարների կողմից ներկայանալ գնանշման հարցմանը:

Պարզաբանում N 1

ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/11 ծածկագրով ընթացակարգի գնման առարկա է հանդիսանում «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 2018թ-ի կարիքների համար բժշկական սարքավորումների,գործիքների եվ պարագաների (հեմոդիալիզի նյութերի եվ պարագաների) ձեռքբերում:

Հեմոդիալիզի սարքավորումների վերանորոգումը և սպասարկումը բավականին թանկ են, որի համար մեր կազմակերպությունը չունի համապատասխան միջոցներ: Շահագործման ընթացքում պարբերաբար առաջանում է հեմոդիալիզի սարքերի վերանորոգման անհրաժեշություն, որը մեր բյուջեի համար բավականին մեծ բեռ է:

Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ 2018թ-ի կարիքների համար կազմակերպվող մրցութային հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսվել է լրացուցիչ պահանջ՝ նպատակ ունենալով ապահովելու նշված ծառայությունների մատուցումը:

Հանձնաժողովի կողմից հրավերում ձեր կողմից մատնանշված պարադիր պայմանի՝ այսինք գործող սարքերի ամենամսյա ստուգում; անհրաժեշտության դեպքում սարքերի ոչ պլանային ստուգում և վերանորոգում; անհրաժեշտության դեպքում սարքավորումները սպասարկող անձնակազմի վերապատրաստում/ ներառումը ուներ մեկ նպատակ՝ ստանալ այդքան շատ կարևոր ծառայություն:

Ելնելով ստեղծված իրավիճակից, տարընթերցումից խուսափելու համար և առաջնորդվելով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, գնահատող հանձնաժողովը որոշեց հրավերում կատարել փոփոխություն, տեխնիկական բնութագրից հանել պարադիր պայմանը:

II. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցների որոշման և հայտարարման մասին

2. **Հայտերը գնահատվել** են «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/11» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով: Ներկայացված հայտը համապատասխանում է հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին և գնահատվել է «Բավարար»:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2"1" **Հանձնաժողովը որոշեց.**

«Ֆրեզեն»ՍՊԸ-ին ճանաչել ընդտրված մասնակից բոլոր չափաբաժինների համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. 2. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04. 05. 2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի պահանջները, հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով՝

- հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակում է տեղեկագրում.
- իր և գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շաների բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակում է տեղեկագրում:
- ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնելու առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:
- Ծանուցելու է ընտրված մասնակիցներին՝ ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :

III. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

3" «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրը ժամը 12:00-ին, ՀՀ Սյունիքի մարզ ք. Կապան, Մ. Ստեփանյան 13, «Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ, հաշվապահություն հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Վիրաբ Մանասյան

Անդամ՝ ---------- Ռիտա Մկրտչյան

---------- Ալինա Առաքելյան

---------- Պավել Հախվերդյան

---------- Լարիսա Հովհաննիսյան

Քարտուղար՝ ---------- Սահականուշ Գրիգորյան